Հարգելի՛ գործընկեր,

Visionest Institute-ն ուրախությամբ հայտարարում է Հայաստանում արտահանման վերապատրաստման իր առաջին ծրագրի մեկնարկի մասին, որը նախատեսված է փոքր և միջին այն ձեռնարկությունների (ՓՄՁ) համար, որոնք պատրաստ են ընդլայնվել և դուրս գալ միջազգային շուկա:

ԴԻՄԵԼ ԱՅՍՏԵՂ

Այս գործնական ծրագիրը կտրամադրի անհրաժեշտ գործիքներ՝ ձեր ընկերության արտահանման ներուժը գնահատելու, ճիշտ շուկաներ ընտրելու, ձեր ապրանքներն ու ծառայությունները համապատասխանեցնելու, շուկայի խոչընդոտները հաղթահարելու, միջազգային գործընկերներ գտնելու, մրցունակ գներ սահմանելու, լոգիստիկան կազմակերպելու, և թվային մարքեթինգի ու էլեկտրոնային առևտրի միջոցով ձեր բիզնեսը զարգացնելու արտասահմանում:

Ծրագրի ավարտին, մասնակից յուրաքանչյուր ընկերություն կունենա ամբողջական և իրագործելի արտահանման ծրագիր՝ փաստաթուղթ, որը կարելի է անմիջապես կիրառել արտահանման գործընթաց սկսելու կամ այն զարգացնելու համար:

Ավելին, ծրագրի հաջող ավարտից հետո դուք կստանաք միջազգային վկայական՝ տրամադրված Visionest Institute-ի կողմից, որը ապացույց կներկայացնի ձեր պատրաստակամությունը՝ գործելու միջազգային շուկաներում:

Ծրագրին մասնակցությունն ամբողջությամբ անվճար է ընտրված ՓՄՁ-ների համար:

Ծրագիրը ֆինանսավորում է Էստոնիայի Միջազգային զարգացման կենտրոնը (ESTDEV): Այն իրականացվում է Visionest Institute-ի կողմից՝ միջազգային փորձագետների համագործակցությամբ:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը **2025 թվականի հունիսի 15-ն է**:

Վերապատրաստումը կմեկնարկի **2025 թվականի սեպտեմբերի 1-ին** և կտևի մինչև դեկտեմբերի վերջ:

Մենք հրավիրում ենք հայկական ՓՄՁ-ներին դիմել այսօր և օգտվել այս բացառիկ հնարավորությունից՝ արտահանման հմտությունները զարգացնելու, բիզնեսը միջազգային մակարդակով ընդլայնելու և կապեր ձեռք բերելու համախոհ ձեռներեցների հետ:

Խնդրում ենք նաև բոլոր ՓՄՁ-ներին այս տեղեկատվությունը փոխանցել բոլոր հետաքրքրված կողմերին կամ գործընկերներին, որպեսզի առավելագույն թվով ձեռնարկություններ կարողանան օգտվել այս հնարավորությունից:

Հետևեք մեզ նաև Facebook-ում՝ տեղեկացված լինելու ծրագրի թարմացումներին և հետագա նախաձեռնություններին՝ Visionest institute in Armenia

Հարգանքով՝
Visionest institute in Armenia

Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել՝
Սոնա Գրիգորյան
sona.grigoryan@visionest.institute
+374 93 942226